№ 60 ՏՍՏԱՎԵՑՈՒՄՔ ՏԱՐԻ Երեքշ., 3 Ք՝ապրիլ 1899 Երեքշ., 3 Ք՝ապրիլ ՏՍՏԱՎԵՑՈՒՄՔ ՏԱՐԻ № 60

ՀԱՅ-ԴԱՏ

Տարեկան 10 րուբլի, կէս տարին 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Բաժանորդագրութիւնները կ՚ընդունի Տաճառն Գեղամեան „Нотъ-Дѣятъ“ Թիֆլիս, Redaction „Nor-Dar“
Բոլոր յօդուածները, որոնք կը վերաբերին խմբագրութեան, պէտք է ուղղել Թիֆլիս, Редакцію „Нотъ-Дѣятъ“
Յայտարարութիւնները կը տպուին 1 կ., տասնեակ 5 կ.
Ձրի յայտարարութիւնները կը տպուին 2 կ., տասնեակ 10 կ.

ԴՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

*) Գրաքննչական տպագրութեան ենթարկուած է։

Տեսնելով մեր ժողովուրդի վիշտերի ծանրութիւնը, մենք ամէն անգամ ստիպուած ենք լինում մեր ուշադրութիւնը դարձնել մեր հայրենիքի վրայ։

Ե։ Ըրևան ձրաման եր 12½ կոպէկ, ձէ. 13 կոպէկ ե այլն։ Ձ էրեսդ եր ձոսա ձրաման ձրեր ձեր ձրաման ձրեր ձրաման ձրեր ձրաման ձր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

համար։ Գ. Զինովիեի, սըը Նիկոլաս Օ'Կոննորի և պ. Կոնստանի հաստատած յարաբերութիւններն աւելի նշանակութեան են արժանանում մանաւանդ իրենց մտերմութեամբ։ Այս մտերմութիւնն ամենից նպաստաւոր կերպով կարող է ազդել Արեւելքի ներկայ դրութեան և գլխաւորապէս ձեռնարկուած և դեռ ևս ձեռնարկուելիք բանակցութիւնների ընթացքի վրայ։ Երբ կարծիքների փոխանակութեան մէջ բարեհամբոյր կերպերով հաշտարար ոգի է գրւում, ի հարկէ այդ դէպքում երկուստէք ևս հեշտութեամբ կարելի կըլինէը զիջումներ անել և վերջնական արդիւնքին աւելի ապահովութեամբ հասնել։ Գոնէ այդ պարագայում գործն արատ չի թողնում, որը ջնջնել միշտ դժուար է լինում։ Ցամենայն դէպս եւրոպական քաղաքականութեան Թիւրքիայի նկատմամբ ունեցած նորագոյն յարաբերութիւններն այն քանի են հասած, որ դատելով եւրոպական թերթերի գործածած լեզուից, կարող ենք ուղղակի խնդակցել։ Մի որոշ ժամանակից ի վեր եւրոպական մամուլի ձայնը, ամեն անգամ երբ Արեւելքի անձերի և գործերի մասին է խօսւում, բաւական քաղցրացած է երևում։ Գ. Կոնստանն ուրախութիւն բացատրութիւններով արտայայտեց իւր զգացումները և սըը Օ'Կոննոր նուազ բարեացակամութիւն և մտերմական համաձայնութեան նուազ փափաք ցոյց չտուեց։ «Times» և «Standard» նշանակելի փութկոտութեամբ չեչտեցին դեռ նորերումս Անգլիայի ներկայացուցչի արտասանած խօսքերի նպատակը՝ ցոյց տալու համար, թէ Անգլիան և Թիւրքիան հաւասարապէս պիտի օգտուին իրար նկատմամբ տածած բարեկամական յարաբերութիւններից։

«Ուրեմն կարող ենք մեր անկեղծ ուրախութիւնը յայտնել այս բոլորի մասին և լաւագոյն հեռանկարներ ակնկալել Արեւելքի համար։ Երբ այս աստիճան համաձայնութեան տրամադրութիւն է ցոյց տրւում, երբ բարեկամական խօսքերն համակիր արձագանք են գտնում մամուլի էջերում, այսինքն հասարակաց կարծիքի մէջ,—դրանցից կարելի է եզրակացնել, թէ ամեն ինչ մեր ցանկութեան համեմատ առաջ է ընթանում և ապագայի խաղաղութիւնն ապահովուած է արդէն»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոր գիսաւոր աստղ—Կալիֆորնիայի Լաս Անջելես գիտարանի տնօրէն պ. Սուիտ մի նոր գիսաւոր է գտել, որը պարզ աչքով նշմարւում է արդէն։ Այս գիսաւորը գտնւում է Որիոն համաստեղութեան մէջ և տակաւին շատ հեռու է, որովհետև խիստ դանդաղ է շարժւում։ Կարծւում է, որ շատ պիտի մնծանայ։ Դեռ Պաբիզում չեն նշմարած այդ գիսաւորը։

—

Պիտի ամուսնանա՞լ երկար ապրելու համար։ «Այժ.» պատասխանում է գերմանացի մի վիճակագիր՝ պ. Պրինցիդ, որ «Ընտ դը լա ստատիստիկ»-ի մէջ մի ուսումնասիրութիւն է արել, թէ ինչ համեմատութեամբ հն մեռնում ամուրիները։ Իւր խուզարկութիւնների արդիւնքներն եղել են ապահովագրական մեծ ընկերութիւնների տուեալներն ու հիւանդանոցների արձանագրութիւնները, որոնցից քաղուած տեղեկութիւնները հաստատում են, թէ մանաւանդ 35—70 տարեկան եղող ամուրիների մահուան համեմատութիւնը չատ աւելի մեծ է ամուսնացածներից։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՄԱԴՐԻԴ, 13 մարտի.— Պոլուիէխան բաղմաթիւ զօրքեր է կանգնեցրել Վալենսիա և Կատալոնիա գաւառների զանազան տեղերում, նամանաւանդ աւելացրել է մի քանի ըերդերի զօրքերը։ «Venadito» յածանաւը կանգնած է Պասախոսի մօտ, հակակով ծովափի վրայ։

ԲԵՐԼԻՆ.—Որովհետև Անգլիան նորից սկսել է դժուարութիւններ յարուցանել Սամոայի առանձին յանձնաժողովի վերաբերմամբ, մանաւանդ Գերմանիայի այն պահանջի դէմ, որ որոշումները ընդունուեն միաձայն, այդ պատճառով գերմանականկառավարութիւնը դիմեց Լոնդոն ինդրելով, որ որոշակի յայտարարուի, թէ ինչպէս է վերաբերւում բրիտանական կառավարութիւնը Սամոայի կղզիների ինդրին։

ՀԵԼՍԻՆԳՓՈՐՍ, 1 ապրիլի.—Բարձրագոյն հրամանով, չուտով այստեղ հիմնուելու է մի առանձին յանձնաժողով սննատի և նահանգապետների գործողութիւնների չրջան որոշելու համար։ Փորձը ցոյց է տուել ինչպէս այն վնասը, որ առաջանում է ծառայական բոլոր գործերը սենատի վրայ ծանրացած լինելուց, այնպէս և այն անհրաժեշտութիւնը, որ պէտք է բաձրացնել նահանգապետների հեղինակութիւնը, որն այժմ նուաստացած է։

ՖԵՐԼԻՆ.—Ափիայից գերմանական պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ անգլիացիներն ամեն օր ռմբակոծում են գիւղերը։ Թանուի և Մատաաֆայի կողմնակիցները կողոպտում են օտարի գոյքերը։ 70 հոգուց բաղկացած անգլոամերիկական մի զօրախումբ, որ ափ էր իջել, ծուղակն ընկաւ Վաիլևի մօտ, որի ժամանակ սպանուած է երեք սպայ և խլուած երկու թնդանօթ։ Մարտանաւերը նորոգել են ծովափի ռմբակոծումը։

ՊԱՐԻԶ.—Դերուլէդի և Գարնիէի գործի վերաբերմամբ նախնական քննութիւնը վերջացած է։

ՍԱՆ ՓՐԱՆՑԻՍԿՈ. Օկլանդից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ Ափիայի մօտ ճակատամարտը խիստ տաք էր։ Ամերիկական և բրիտանական նաւատորմիղները բաղմիցս չետ էին մղուած յարձակում գործողների կողմից, որոնք աշխատում էին յաղթել նրանց իրենց գերազանց թուով։ Սպանուած սպաներն ու նաւատորմիղները թաղուած են Մուլինում զինուորական պատիւներով։ Մատաաֆայի կողմնակիցներից 40 հոգի սպանուած են, իսկ չատ-չատերը վիրաւորուած. ապստամբները նրանց տարան իրենց հետ։

ԹԵՐ ԵՒ ԴԵՄ

(Նամակ խմբագրութեան)

Մենք մեր նախկին թղթակցութիւններից մէկի մէջ չեչտել էինք, որ պ. Փաշայեանը սրբ. Այվատեանի մտերիմն է։ Բայց պարոնի նամակը տեղոյդ մի լրագրի խմբագրատանը երկար ժամանակ փտելուց յետոյ, այժմ փառաբանական դէնքերով է ասպարէզ ընկել անվայելուչ խօսքերով. մնաս չունի, Գ. Գոլսի բժշկական համալսարանի (sic) ցենգաւորը կարող է և փաստաբան, և, և, և, և, այլն էլ լինել, խօսք չունինք, բայց երբ «մի ստահօտ թղթակցի դիմակն է վար առնում», թող չմոռանայ, որ մենք էլ իւր դիմակը պիտի «վար» զարնենք։ Մի ուրիշ անգամ մենք կաշխատենք նրա խակական լուսանկարը հանել, բայց առ այժմ կրներքենք այն կէտերը, որոնց մէջ պարոնը բացարձակ մեղանչում է. պարոնը կրկին անգամ իւր գլուխը կորցնելով «նախկին ուսուցչին» արբած է անուանում։ Մենք երբէք Սուսանեանի հետ անձնական հաչիւներ չունենք որ պաշտպանենք, բայց մի բան որ կեղծւում, ստւում է մինչև անխղճութեան աստիճանը, անկարող ենք լռել. եթէ քաջութիւն ունի թող հասստաէ, բայց ինչ ենք ասում. երեխայական անտակտութեամբ իւր վարմունքն «արժանի» է հռչակում, մի վարմունք որի համար ինքը նոյն գիշեր նկատողութիւն ստացաւ և խոստովանուեց թէ «չկրցաւ իրեն զսպել» այնքան կրքով խօսեց. այդ հերիք չէ, այլև խեղաթիւրում է ճշմարտութիւնը և ասում, թէ «անձնական ինդիր մը յուզեց նախագահութեան (իմա նախագահ Փաշայեանի) դէմ (թողնենք այն կէտն էլ որ նախագահութիւնն իրեն զիջել են, որովհետև ուրիշն էր ընտրուել)։ Այս խօսքերն հերքելու համար խնդրում ենք կարդալ լսարանի դէպքը «Նոր-Դար»-ի № 15-ում, որի և ոչ մէկ կէտը չէ հերքել մեր անդիպլոմ փաստաբանը, բայց փորձել է անուղղակի ճանապարհներով կատարել այդ։ Բացի դրանից սրբազանի վարմունքը համարել է գրեթէ ապօրինի վարչական ժողովի նիստում։ «Այո, սրբազանը դէշ բրաև այն երեկոյ»։ Այդքան իրաւացի բաներ գրուեցան Այվատեանի դէմ և Փաշայեանն աշխատել է ողորմելի փաստերով ու ստերով հերքել միմիայն մէկը դրանցից զարմանալու բան է, չէ...

«Թղթակիցն» իրաւամբ հանդէսի անկարգութիւնը սրբազանին վերագրելով, ասում է «Ղալայի կանանց ընկ. և նոյն թաղի ուսուցչական խումբն արդէն բըռնել են եպիսկոպոսի եախէն...» նախ՝ որ կանանց ընկ. էլ պաշտօնական ձևով է դիմել այդ միջոցին, իսկ երկրորդ կէտը միանգամայն սխալ է. ոչ թէ ուսուչական խումբն է այդ քայլն արել (որ անտեղի էլ կըլինէը), այլ ուսուցչական խմբից այն երեք պարոնները, որոնք յանձնաժողովի անդամներն էին։ Սրբազանը ճառախօս պարոնի վերաբերմամբ այսպէս է ասել յանձնաժողովի անդամներին. «անիկայ (...) մ'էր՝ կերաւ, ես կըպահանջեմ որ գնայ երկու ընկերութիւնների վարչութիւններից էլ ներողութիւն խնդրէ», բայց մինչև այսօր այդ խօսքերը չարդարացան։

Թէ «Նոր-Դար»-ի (№ 44) և թէ հակառակ թերթի յիշեալ թղթակցութիւնները մեծ իրարանցում են գցել մտաւորների չրջանում։ Նրանք որոնք իրենց վիրաւորուած են գտում, սպառնում են դատ բանալ և չուտով մենք ականատես կըլինինք մի զարմանալի տեսարանի. բայց մտածում ենք, ինչու չհերքել հիմնական փաստերով, և այդպիսի միջոցների դիմելով, ուր երբեմն ստւում ու ճշմարիտը, իրաւացին ու անիրաւը գոհ-ւում են փոխադարձաբար...։

Մի նկատողութիւն ևս։ «Թղթակցի» բարոյական պարտքն հասկանալով եթէ երբեմն մէկի վերաբերմամբ մի անտեղի կամ սխալ տեղեկութիւն ենք տուել, պատրաստ ենք մեր խօսքը յետ առնելու, երբ հակառակը լսենք և ստուգենք։ Վերջապէս չենք կարող մեր բարոյական զայրոյթը. չարտայայտել պ. Փաշայեանի դէմ, այն Փաշայեանի, որ Այվատեանի համար ասել է «համոզումներէ զուրկ, թոյլ կամքի և բնաւորութեան տէր» (պատրաստ ենք միշտ հաստատելու մեր ասածը) և յետոյ վեր է կենում և «ծակ» փաստաբանութեամբ պաշտպանում է իւր հայրենակցին։

Հասարակական գործիչը հեռու պէտք է պահէ իրեն խնամիական և բարեկամական նեղ կապերից ու չահերից...։

Աս.

Թուրիզ, 24 մարտի

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Ամսոյս 4-ին, առաջիկայ կիւրակէ օրը, 12 ժամին, Ս. պատարագիչ յետոյ, Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ բարեպաշտ ծխականները հրաւիրւում են յիշեալ եկեղեցին՝ նոր երէցփոխան ընտրելու։

Գործակալ ա. մ. եկ. Հ. Թիֆլիսի՝
Զաքարիա ք. Զարդեղեանց

(42) 2—2

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԻՄ
Կիրակի, ապրիլի 4-ին
Հայ դերասանական ընկերութիւնը
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ՕՐ. ԷԴՄԵԱՆԻ ԵՒ Գ. ՄԻՐԶԱՆԵԱՆԻ
ԿԸՆԵՐԳԱՑԱԾ
ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԳԱՂՏՆԻՔ
Կոմ. 3 գործ.
ԿՈՒԻ ՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԷԻ
Կոմ. 1 գործ.
ՍԿԻԶԲՆ Է 8½ ԺԱՄԻՆ ԵՐԵԿ.
(47) 1—1

«ԵՐԱՔՍ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Վերջերս լոյս ընծայած «Արաքս» ի գիրքը պարունակում է ազգային անցեալ և ներկայ կեանքին վերաբերեալ զանազան գրուածքներ և 46 նկար, որոնցից 35-ը գուտ հայկական կեանքից։

Երկրորդ գիրքը կրհրատարակուի անհամեմատ չքեղ նկարներով։

«Արաքս»-ի բաժանորդագրութիւնն է 3 րուբլի կամ 10 ֆրանք։

Դիմել այս ապահով հասցէով՝
Петербургъ, Симеону Гуламириянцу, կամ St.-Pétersbourg, Siméon Goulamiriantz.
(33) 5—5

М· 51994 9—7

ՀԱՆԴԷՍ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ
Ժողովածուի

3, 4, 5 և 6 գրքերի մնացած օրինակները վաճառւում են միասին 3 րուբ. ճանապարհածախսով։ Ցանկացողները դիմում են հրատարակչին հետեւեալ հասցէով. Москва, Малый Златоустовскій пер., д Гиршъ, Типографія Бархударянъ
10—10



(М.) № 35889 52—4

Շատ շուտով լոյս կըտեսնի
ԴԱՍԱԳԱՍՏԻ
«ԿՆՔԱՀԱՅՐ»
վէպը
Ա. և Բ. Հատոր
(32) 6—6

ԱՄԵՆԱՅՏՅՏՆԻ ԴՐԱՔԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՅԵԱԼ-ԼՆԵՐ

ՓՈՇՈՄՈՒՐՆԵՐ

Փիսհարմոնիումներ, Ջութակներ կիթառներ, Փլէյտներ, կլարնետներ, Ձայնախաչկեր, լարեր և այլն և այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս.

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ
ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ԶՐԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՈՐՆԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
Б. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ ул.
36—6

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ
Առանում սոյն ապրիլի 9-ին նշանակուած է
Ա Ճ Ո Ւ Ր Դ
առանց կրկնաճրպի վարձու տալու ս. Էջմիածնի կալուածքի վերին յարկը, որ գտնւում է Պուշկինեան փողոցի վրայ 5-րդ քաղաքամասում։ Պայմանների մասին ծանօթանալ Կոնսիստորիայի դիւանատունը։
Անդամ Կոնսիստորիայի Գրիգոր ա. ք. Տէր-Բարսէղեանց։
(45) 3—1

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ՀՐԱՒԻՐՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Ի
ապրիլի 4-ին, աւուտեան ժամը 12-ին, ԿԱՐ ու ՉԵԻ դպրոցը, Գանովսկայա № 25, քննելու պ. Նահանգապետի առաջարկած նոր կանոնադրութեան նախագիծը։
(43) 3—3.

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐ ՈՒ ՉԵԻ ԴՊՐՈՑՈՒՄ
Ապրիլի 4-ին, 5-ին և 6-ին տեղի կունենայ աշակերտուհեայ ձեռագործների վաճառումն աւուտեան ժամը 10—3-ը և երեկոյեան ժամը 5—7-ը, Գանովսկայա № 25։
(44) 4—3

Дозв. цензурою Тифлисъ, 2-го апрѣля дня, 1899 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ домъ № 13. Телефонъ№ 378